# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2021 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ- ՍԵՊՏԵՄԲԵՐ, ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԱԺԲԳ













* Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները.

** Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տուգանքները և տույժերը, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև՝ ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)

2021 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 1 տրիլիոն 137.3 մլրդ դրամ, որը կազմում է 2021թ. ինն ամիսների նախապես հաստատված ցուցանիշի 109.9 %-ը: Ընդ որում, 2021 թ. փաստացի ցուցանիշը 2020թ. համապատասխան ցուցանիշից ավել է 11.9%-ով կամ 120.5 մլրդ դրամով, 2019թ. ցուցանիշին գերազանցում է 5.4 %-ով կամ 58.2 մլրդ դրամով և 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 28.1 %-ով կամ 249.6 մլրդ դրամով:

2021 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 383 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 14.3 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է 7.5 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 25.5 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 131.5 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 7.3 %-ով, սակայն 2019 թ. ցուցանիշից պակաս է շուրջ 11.5 %-ով և 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 2 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 318.4 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշից ավել է 2.5 %-ով, 2019 թ. ցուցանիշին գերազանցում է 4.6 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 22.7 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 76 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին զիջում է 9.1 %-ով, 2019 թ. ցուցանիշին զիջում է 7.6 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 2.3 %-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 62.5 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 33.4 %-ով, 2019 թ. ցուցանիշին զիջում է 5.1 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 5.4 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 48 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 17.3 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է 20.5 %-ով և 2018 թ. ցուցանիշից ավել է 13.8 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 22.7 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 14.6 %-ով, 2019 թ. ցուցանիշին գերազանցում է շուրջ 10.5 %-ով, 2018 թ. ցուցանիշին գերազանցում է 59.9 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 31.6 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է 82 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է մոտ 2.28 անգամ և 2018 թ. ցուցանիշից ավել է 2.36 անգամ,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են շուրջ 33.1 մլրդ դրամ, որը 2020 թ. համապատասխան ցուցանիշին գերազանցում է շուրջ 88 %-ով, 2019 թ. ցուցանիշից ավել է շուրջ 2.2 անգամ և 2018թ. ցուցանիշից ավել է 2.3 անգամ,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 34.5 մլրդ դրամ, որը 2020թ. համապատասխան ցուցանիշից ավել է 52.7 %-ով, 2019 թ. ցուցանիշին գերազանցում է 15.1 %-ով և 2018 թ. ցուցանիշից ավել է 33.8 %-ով:

Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվությունը 2018-2020թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ